ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ - ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽՈՑԵԼԻ ԵՎ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ

Իրականացման ժամանակահատված: 01.12.2021 - 01.12.2022

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 60 000

Ընդհանուր բյուջե: € 60 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Impact Hub Armenia Social Innovation Development Foundation

Նախագծի նկարագրություն:

Հետպատերազմյան ժամանակաշրջաններում ակտիվ ձեռներեցությունը միշտ կարևոր գործոն է հանդիսացել, քանի որ այն առաջ է մղում հասարակության վերականգնումն ու զարգացումը՝ միաժամանակ ազդեցություն գործելով հետպատերազմյան բազմաթիվ հետևանքների վրա:

‘‘Ավելի ուժեղ ձեռնարկատիրական էկոհամակարգ Սյունիքում - Աջակցություն խոցելի և տեղահանված մարդկանց’’ (SEES) ծրագիրը կաջակցի տեղահանված և խոցելի անձանց, ինչպես նաև այս խմբերի հետ աշխատող ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գաղափարներին, նախաձեռնություններին և ծրագրերին՝ նպատակ ունենալով թեթևացնել պատերազմի հետևանքները և ներկայիս անորոշ իրավիճակը՝ այդպիսով ուժեղացնելով Սյունիքում ձեռնարկատիրական էկոհամակարգը, որը ոչ միայն հետպատերազմյան վերականգնման գործընթացի կարևոր բաղադրիչ է, այլև ընդհանրապես կայուն զարգացման:

Իմփաքթ Հաբ Հայաստան սոցիալական նորարարությունների զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ Իմփաքթ Հաբ Երևան) շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի առաքելությունն է աջակցել սոցիալական ազդեցության ծրագրերին և ձեռնարկություններին, որոնք խթանում են Հայաստանի դրական զարգացմանը: 6-ամյա կայուն գործունեությունից հետո (ներառյալ համաճարակի և պատերազմի ընթացքում) մենք հավատում ենք, որ պատրաստ ենք ընդլայնվել և տարածվել դեպի Հայաստանի այլ մարզեր:

Ակնկալվող արդյունքներ:

- Իմփաքթ Հաբ Սյունիքի գործարկում՝ ապահովելով ֆիզիկական տարածք համագործակցության, համատեղ աշխատանքի և աջակցության համար: Իմփաքթ Հաբ Սյունիքը կշարունակի իր գործունեությունը ծրագրի ավարտից հետո
- Մասնակիցների 65%-ը (10 ծրագրեր/ստարտափներ) աջակցություն են ստանում՝ դառնալու գործող սոցիալական ձեռներեցություններ
- Մարդասիրական կարիքների և խոցելիության նվազեցում՝ խոցելի/տեղահանված խմբերից շուրջ 300 շահառուների թիրախավորելու արդյունքում (վերապատրաստումների, նոր աշխատանքի հնարավորությունների ստեղծման միջոցով, և այլն)
- Տարածաշրջանում ձեռներեցության դերային մոդելների ստեղծում՝ այլ անհատների մոտիվացնելու նպատակով
- Շահերի պաշտպանության բազմակողմանի կապերի ստեղծման միջոցառում՝ Սյունիքում ձեռնարկատիրական միջավայրը բարելավելու նպատակով